

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ ՌԱԶՄԻԿԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում

Գիտական ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Վ.Ս. Ոսկանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք.գ.դ., դոցենտ Հ.Հ. Մեսրոպյան
ք.գ.թ. Լ.Ա. Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝
Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2018թ. մարտի
26-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ լեզվաբանության 019
մասնագիտական խորհրդի նիստում: (հասցե՝ 0015, Երևան,
Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. փետրվարի 24-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ն.Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն ատենախոսությունը նվիրված է ժամանակակից աղբբեջանական մամուլի, մասնավորապես էլեկտրոնային լրատվամիջոցների լեզվի բառապաշարային առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Հաշվի առնելով որոշոտի զարգացման դինամիկ բնույթը՝ ներկայում աղբբեջանական մամուլում նկատվող լեզվական գործընթացները պահանջում են առանձին և բազմակողմանի հետազոտություն: Ժամանակակից աղբբեջանական մամուլն արտացոլում է հասարակական կյանքի բոլոր ասպարեզներին առնչվող իրադարձությունների պատկերը, որոնք ստանում են նաև լեզվական ձևակերպում:

Թեմայի արդիականությունը; Ըստ էության, աղբբեջանական զանգվածային լրատվամիջոցների և մասնավորապես մամուլի լեզուն ընդգրկում է մեծածավալ տեղեկություն տվյալ երկրի և ժողովրդի մասին: Թեմայի արդիականությունը պայմանավորված է լեզվական գործընթացների փոփոխությունների ընդգրկունությամբ և մասշտաբներով: Սույն հետազոտությունն արդիական է նաև հանրալեզվաբանական տեսանկյունից:

Աշխատանքի նպատակը և խնդիրները; Աշխատանքի նպատակն է հանգամանալից ուսումնասիրել ժամանակակից աղբբեջանալեզու մամուլի բառապաշարը, իրականացնել դրա առանձնահատկությունների և զարգացման հեռանկարների համակողմանի վերլուծություն:

Աշխատանքի նպատակը հնարավորություն է տալիս լուծելու հետևյալ խնդիրները.

1.<ետևել ադրբեջանալեզու մամուլի բառապաշարի զարգացման հիմնական գործընթացներին:

2.Մատնանշել ադրբեջանալեզու մամուլի բառապաշարի փոփոխությունների հիմնական միտումները, լեզվական ու արտալեզվական գործոնները, որոնք ազդում են լեզվի հրապարակախոսական ոճի զարգացման վրա:

3.Առանձնացնել մամուլի լեզվի հիմնական բառապաշարային խմբերը, որոնք աչքի են ընկնում որոշակի ընդհանուր բովանդակային բնութագրիչներով:

4.Խմբավորել ժամանակակից ադրբեջանալեզու մամուլում գործածվող փոխառյալ բառերը՝ ըստ ծագման:

5.Ցույց տալ նորաբանությունների և տերմինների դերը մամուլի բառապաշարի հարստացման գործում:

6.Վերհանել ժամանակակից Ադրբեջանում լեզվական գործընթացների շուրջ ընթացող մասնագիտական ու հասարակական քննարկումների հակասական բնույթը:

7.Ներկայացնել ժամանակակից հայ և ադրբեջանական մամուլում ընթացող լեզվական գործընթացները զուգադրման ձևով՝ ցույց տալով բառապաշարի զարգացման ընդհանուր միտումները և առանցքային տարբերությունները:

Աշխատանքի գիտական նորույթը: Սույն թեմայով ուսումնասիրությունն առաջինն է հայկական գիտական շրջանակներում, ուր քննության է ենթարկվում ժամանակակից

ադրբեջանալեզու մամուլի լեզվի բառապաշարը: Առաջին անգամ հանգամանալից ուսումնասիրվում է էլեկտրոնային լրատվամիջոցների լեզվի տերմինային շերտը, փոխառությունների կիրառության հարցը: Աշխատանքի գիտական նորույթը նաև զանգվածային և հատկապես էլեկտրոնային լրատվամիջոցներում ընթացող ակտիվ գործընթացների ամբողջական պատկերը ներկայացնելն է՝ քննության առարկա դարձնելով նաև արդի հայկական մամուլի լեզվի ընդհանուր բառապաշարային պատկերը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմք:

Ատենախոսության համար մեթոդաբանական հիմք են ծառայել նկարագրական, համադրական և տիպաբանական համեմատության մեթոդները, ինչպես նաև կառուցվածքային վերլուծությունը, ոճական վերլուծության տարրերը և տեքստի լեզվաբանական վերլուծությունը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը:

Աշխատանքում արծարծված դրույթներն ու հարցերն իրենց արտացոլումն են գտել ՀՀ տարբեր գիտական պարբերականներում և ժողովածուներում հրատարակված հոդվածներում: Աշխատանքը կարող է ծառայել ադրբեջաներենով, վերջինիս բառապաշարով և ադրբեջանական մամուլով հետաքրքրվող անձանց մասնագիտական հմտությունները զարգացնելուն: Ատենախոսության մեջ զետեղված մեջբերումներն ադրբեջանական մամուլից և ադրբեջաներենի բառապաշարային

որոշ առանձնահատկությունների ուսումնասիրությունը նպաստել է «Ադրբեջաներենի դասագրքի» ստեղծմանը:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում և պաշտպանության երաշխավորվել: Ատենախոսության մի շարք դրույթներ և եզրակացություններ լուսաբանվել են տարբեր գիտական պարբերականներում, գիտական զեկույցներում, մամուլի ասուլիսներում և հարցազրույցներում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ներկա աշխատանքն ընդգրկում է ադրբեջաներենի զարգացման ժամանակակից փուլը, որի սկիզբ համարվում է 1991թ. Ադրբեջանի անկախացումը: Առավել մեծ թվով մեջբերումներ կատարվել են 2010թ.-ից հետո լույս տեսած թերթերի էլեկտրոնային տարբերակներում զետեղված հրապարակումներից: Որպես աղբյուր ծառայել են գերազանցապես էլեկտրոնային ռեսուրսները՝ հաշվի առնելով ժամանակակից ադրբեջանական թերթերի տպագիր տարբերակներից օգտվելու փաստացի անհնարինությունը:

Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Աշխատանքը շարադրելիս օգտվել ենք հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն և ադրբեջաներեն աղբյուրներից: Հատուկ կարևորություն է տրվել տեսական լեզվաբանական, ինչպես նաև մամուլի լեզվին նվիրված գիտական աշխատություններին: Հաշվի առնելով, որ ներկայիս

ադրբեջանական մամուլի առանձնահատկությունների ուսումնասիրությունը հետաքրքրում է գերազանցապես ադրբեջանական գիտական շրջանակներին, ուստի աշխատանքում օգտագործված գրականության և աղբյուրների մի զգալի մասն ադրբեջաներեն են: Ատենախոսության չորրորդ գլուխը շարադրելիս օգտվել ենք նաև հայկական լրատվամիջոցներից: Աշխատանքի «Ներածություն» բաժնում ամփոփ ներկայացված են սույն թեմային նվիրված ուսումնասիրությունները:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը; Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և չորս գլխից, եզրակացություններից, ծանոթագրություններից, գրականության և էլեկտրոնային լրատվամիջոցների ցանկից:

Ներածության մեջ ներկայացված է ադրբեջաներենը որպես թյուրքական լեզու, ադրբեջանական մամուլի համառոտ պատմությունը և մամուլի լեզվի ընդհանուր պատկերը, անդրադարձել ենք ադրբեջաներենի բառապաշարի և մամուլի լեզվի, ինչպես նաև հայ մամուլի լեզվի ուսումնասիրության պատմությանը:

Գլուխ 1. ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Սույն գլխում մանրամասն քննության է առնվում ադրբեջաներենի բառապաշարը, վերջինիս հարստացման

հիմնական ուղիները և զարգացման փուլերը՝ ըստ ժամանակագրության:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «Ադրբեջաներենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը», որտեղ հանգամանալից ներկայացված են բառապաշարի հատկանիշները, առանձին շերտերը, զարգացման առանձնահատկությունները, հարստացման եղանակներն ու ուղիները: Երկրորդ ենթագլխի վերնագիրն է «Ադրբեջաներենի բառապաշարի զարգացման և հարստացման հիմնական փուլերը»: Ադրբեջանցի լեզվաբանների, պատմաբանների՝ լեզուն ըստ փուլերի դասակարգելու փորձերից առավել ընդունելի է համարվում Ա.Դեմիրչիզադեի բաժանումը¹: Առավել հանգամանալից ներկայացվում է ադրբեջաներենի զարգացման խորհրդային շրջանը ² : 1991թ. Ադրբեջանի անկախացումից հետո ադրբեջաներենը սկսում է զարգանալ որպես անկախ պետական լեզու:

Երրորդ՝ «Ադրբեջանական մամուլի լեզվի զարգացման փուլերը», ենթագլուխը նվիրված է ադրբեջաներենի հրապարակախոսական ոճի ձևավորմանը և զարգացմանը: «Էջինջի» թերթի լույսընծայմամբ սկսվում է ադրբեջանական մամուլի և, հետևաբար, մամուլի լեզվի պատմությունը: Չորրորդ՝ «Նորաբանություններն ադրբեջաներենում և դրանց

1. Демирчизаде А.М., “О периодизации истории азербайджанского литературного языка”, Структура и история тюркских языков, М. 1971, с. 251-260.

2. N.M.Xudiyev Azərbaycan ədəbi dili tarixi. Ali məktəblər üçün dərslik. Bakı, “Elm və təhsil”, 2012.

կիրառությունը մամուլում», ենթազլխում նախ խոսվում է նորաբանությունների տեղի ու դերի մասին լեզվի զարգացման գործում, ինչպես նաև ներկայացվում են նորաբանությունների ստեղծման ուղիներն ու եղանակները ինչպես բառակազմական միջոցներով (օրինակ, demokratlaşdırmaq- ժողովրդականացնել, aktivlik- աշխուժություն, ակտիվացում, seçkiqabağlı- նախընտրական, neftayiran-նավթահոր), այնպես էլ փոխառությունների հաշվին (distributer-մատակարար, diler-վաճառող, դիլեր, eksçenc-փոխանակում): «Տերմինների կիրառումն ադրբեջանական մամուլում» վերնագիրը կրող հինգերորդ ենթագլուխը նվիրված է ադրբեջաներենի տերմինային համակարգի քննությանը և ժամանակակից մամուլում դրանց կիրառման հարցին: Ներկայումս ադրբեջաներենի բառային կազմը հարստանում է մեծաքանակ տերմիններով³:

Գլուխ 2. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵՋՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՆ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ

Երկրորդ գլխի առաջին՝ «Ադրբեջաներենի բնիկ և փոխառյալ բառապաշարի առանձնահատկություններն ու գործածումը ադրբեջանական մամուլում», ենթազլխում հիմնականում քննության են ենթարկվել ադրբեջաներենում բնիկ և փոխառյալ բառերին բնորոշ ընդհանուր գծերը, կիրառման առանձնահատկությունները: Թյուրքական լեզուների համար

3. Новрузова С., О многозначности научно-технических терминах, Terminologiya məsələləri №1, Bakı-Elm -2014, s.39.

ընդհանուր համարվող բազմաթիվ բառեր գործածվում են աղբրեջաններենում և մերծավոր այլ ցեղակից լեզուներում⁴:

Երկրորդ ենթագլխի անվանումն է «Փոխառությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները»: Լեզվաբանների կողմից կատարվել են մի շարք փորձեր՝ խմբավորելու աղբրեջաններենում առկա փոխառություններն ըստ ծագման, և այդ փորձերը միմյանցից էականորեն չեն տարբերվում՝ արաբական ծագման բառեր, պարսկերենից փոխառված բառեր, ռուսական փոխառություններ, եվրոպական լեզուներից փոխառված բառեր, երբեմն էլ՝ թուրքերեն փոխառություններ: Երրորդ՝ «Արաբապարսկական փոխառություններ», գլխում հստակ երևում է, որ աղբրեջանական մամուլը դեռևս հագեցած է արաբական բառերով (izah-բացատրություն, inša-կառույց, sait-ձայնավոր, saat-ժամ, ժամացույց, şüur-գիտակցություն, təxribat-դիվերսիա և այլն): Պարսկերենից փոխառված բառերը վերաբերում են կենցաղին, գիտական տարբեր ոլորտների, հրապարակախոսությանը, գեղարվեստական ոճին և այլն (zəng-զանգ, qəşəng-գեղեցիկ, pəri-փերի, kəfگیر-քափքաշ, hökmran-տիրակալ, bixəbər-անտեղյակ և այլն): Կատարվել է նաև ամփոփ

4. Buludxan X., Mūsasir Azərbaycan dilinin leksikologiyası, Bakı, »Nurlan« nəşriyyatı, 2008, c. 28.

դիտարկում՝ ներկայացնելու ժամանակակից մամուլում արաբապարսկական բառերի դերը⁵:

Չորրորդ ենթագլուխը նվիրված է ռուսական փոխառություններին: Ռուսերենը հսկայական ազդեցություն է ունեցել ադրբեջաներենի բառապաշարի հարստացման գործում: Ռուսերեն բառերի առավել մեծ ներհուսք նկատվել է Ադրբեջանի՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնելուց հետո: Այսօր էլ ադրբեջանական մամուլը հագեցած է ռուսերեն բառերով, սակայն դրանց թիվն աստիճանաբար նվազում է (telexranitel-թիկնապահ, trimo-զարդասեղան, sumka-պայուսակ, tvorog-կաթնաշոռա, qəzət-թերթ, məşın-մեքենա, vedrə-դույլ, stol-սեղան և այլն): Հինգերորդ գլխում քննության են ենթարկվել ադրբեջանական մամուլում հաճախ հանդիպող արևմտաեվրոպական լեզուներից վերցված փոխառությունները: Վեցերորդ՝ «Թուրքաբանություններ», ենթագլխում անդրադարձ է կատարվել վերջին տասնամյակներում ադրբեջաներենում նկատվող մի երևույթի՝ թուրքերեն բառերի քանակի աճին: Թուրքերեն բառերը հայտնվում են ինչպես խոսակցական լեզվում, այնպես էլ մամուլում (olay-իրադարձություն, ilisgi-կապ, önmə-kարևորություն, toplantı-

5 Azərbaycan əhalisinin (**həyət**) əksəriyyəti (**həilmir**) ki, Qərbdə (**işli oğlan**) adamın (**əkrodijə**) ən bahalı mallar alması çox sadə (**şüur şey**) idi. » (**İqtisadi** bəhşah: Azərbaycan və dünya, 04.04.2010, <http://www.azadliq.org/content/article/2001030.html> - «Ադրբեջանի բնակչության մեծ մասը տեղյակ չէ, որ արևմուտքում աշխատանք ունեցող մարդու՝ վարկով թանկարժեք ապրանք գնելը շատ պարզ երևույթ է»:

նիստ, durum–իրավիճակ, öndər-առաջնորդ և այլն): Առանձին ենթագլուխ նվիրված է մամուլում հանդիպող փոխառյալ հապավումներին, որոնց մի մասն աղբբջաներեն է թափանցել ռուսերենից, մի զգալի մասն էլ՝ եվրոպական լեզուներից անփոփոխ ձևով, ինչպես դրանք գործածվում են փոխատու լեզվում (NATO, YUNESKO, İSESKO, FIFA, SMS, VIP և այլն): Այստեղ կրկին տիրապետող է անգլերենի դիրքը, որի արդյունքում բազմաթիվ հապավումների միջազգայնացման գործընթացն ավելի է արագանում ⁶: «Փոխառյալ ձևույթներ» ենթագլխում քննվում են ձևաբանական փոխառությունները որպես փոխառությունների առանձին տեսակ: Սույն, ինչպես և նախորդ ենթագլուխներում ընդգրկված են բազմաթիվ մեջբերումներ էլեկտրոնային մամուլից:

Գլուխ 3. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Առաջին ենթագլխի վերնագիրն է՝ «Ձանգվածային լրատվամիջոցների լեզուն որպես ուսումնասիրության առարկա. մեդիալեզվաբանություն»: Մեդիալեզվաբանությունը համարվում է ժամանակակից լեզաբանության ինքնուրույն ուղղություն և զարգանում է բավականաչափ արագ՝ պայմանավորված գիտատեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացով: Երկրորդ՝ «Քաղաքական բառապաշարն

6. Məhərrəmovə V., Azərbaycan və İngilis dilləri arasındakı Abreviativ xarakterli leksik paralellər, Terminologiya məsələləri, №1, BAKI-ELM-2014. 145-146 ss.

ադրբեջանական մամուլում», ենթագլխում քննության է ենթարկվում մամուլում ամենաշատ հանդիպող քաղաքական լրահոսի լեզուն: Հասարակական-քաղաքական բառապաշարը հարուստ է և ինքնատիպ⁷: Երրորդ՝ «Տնտեսություն», ենթագլխում ուսումնասիրության առարկան ադրբեջանական մամուլի՝ տնտեսական բնույթի հրապարակումների լեզվի բառապաշարն է: Չորրորդ ենթագլուխն արտացոլում է ռազմական բառապաշարը: Իրենց ընդգրկումնությամբ ռազմական բնույթի հրապարակումներն արդիական են ադրբեջանական մամուլի էջերում: Ռազմական բառապաշարն ադրբեջաներենում ունի ինքնատիպ և կայուն բնութագիր: Ադրբեջանական մամուլի ռազմական բաժիններում առաջատար դիրք ունեն արցախյան հակամարտությանն առնչվող նորություններն ու վերլուծությունները:

Հինգերորդ ենթագլուխը («Մշակույթ») նվիրված է ադրբեջանալեզու ժամանակակից մամուլի մշակութային հրապարակումների բառապաշարային վերլուծությանը: Հաջորդ՝ «Գիտական և տեխնիկական բնույթի հրապարակումներ», ենթագլխում արժարժվում է ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ստեղծված և զարգացող նոր

7. Демьянков В.З., ИНТЕРПРЕТАЦИЯ ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА В СМИ, // ЯзыкСМИ как объект междисциплинарного исследования: Учебное пособие / Отв. ред. М.Н.Володина. М.: Изд-во Московского государственного университета им. М.В. Ломоносова, 2003, с .125.

բառապաշարը⁸: «Սպորտ» ենթազխում քննության առարկա է դարձել մարզական նորությունների բառապաշարը: Ադրբեջանական մամուլը հագեցած է բժշկական տերմիններով հարուստ հրապարակումներով: Բնապահպանական թեմաներով հրապարակումներին ևս անդրադարձ է կատարվել առանձին ենթազխով, որտեղ զետեղվել են հիմնականում գլոբալ բնապահպանական հարցեր, եղանակային կանխատեսումների և բնության պահպանման կանոնների, կենդանական և բուսական աշխարհի (իններորդ ենթազխով) վերաբերյալ հոդվածներ, վերլուծություններ: «Կրոն» ենթազխում վերլուծության ենթարկված ադրբեջանական մամուլի հրապարակումների լեզուն հարուստ է կրոնական՝ մասնավորապես իսլամի տերմիններով: Հակիրճ անդրադարձ է կատարվել նաև «քրեական լրագրություն» հասկացությանն ու բառապաշարին: Վերջին ենթազխում ընդհանրացված կերպով ներկայացված են զանազան թեմաներով հրապարակումներն ադրբեջանական մամուլում, որոնցից առանձնացրել ենք կենցաղին, մարդկանց առօրյային, ժամանցին, կերակրատեսակներին, նորաձևությանը, աստղագուշակությանը, դիզայնին և այլ թեմաներին առնչվող բառապաշարը:

Գլուխ 4. ԱՐԴԻ ՀԱՅ և ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵՁՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՉՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

8 Куранбекова., ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ ТЕРМИНОЛОГИИ В СОВРЕМЕННОМ ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ(Вопросы филологии. - М., 2003 - № 2 (14). – с. 16-18.

Աշխատանքի չորրորդ գլխում փորձ է արվում ներկայացնելու հայ և ադրբեջանական ժամանակակից մամուլի լեզվի ընդհանուր բառապաշարային պատկերը համեմատական, զուգադրական մեթոդով: Սույն գլխի բարդությունը նախ այն է, որ հայ մամուլն ունի հարյուրամյակների հարուստ պատմություն, անցած բազմաբովանդակ ուղի, իսկ ադրբեջանական մամուլի պատմությունը սկիզբ է առել միայն 19-րդ դարի վերջին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ Հայաստանը և Ադրբեջանը եղել են ԽՍՀՄ կազմում որպես միութենական հանրապետություններ, մինչ այդ՝ ցարական Ռուսաստանի մաս, ուստի ժողովուրդների պատմության այդ հատվածն ունեցել է որոշ ընդհանրություններ: Արդյունքում երկու հանրապետությունների մամուլի զարգացումն ունեցել է առանձնահատկությունների ընդհանրություն: Խոսքը առաջին հերթին մամուլի լեզվի բառապաշարի՝ ռուսերեն փոխառություններով հարուստ լինելու մասին է: ԽՍՀՄ փլուզումից հետո հայ և ադրբեջանական հրապարակախոսությունը բռնեցին զարգացման ինքնուրույն, առանձին ուղիներ: Հայերենը աստիճանաբար մաքրվեց խորհրդային շրջանում լեզու մուտք գործած օտար բազմաթիվ բառերից՝ դրանք փոխարինելով հայերեն համարժեքներով: Ադրբեջաներենում ևս սկսվեց համանման գործընթաց, սակայն մի էական տարբերությամբ, որ լեզվի սեփական հնարավորություններով ստեղծված բառերն իրենց քանակով և որակով էականորեն զիջում են փոխառյալ բառերին: Այս փուլում փոխվեց փոխառությունների աղբյուրը՝ ռուսերենին փոխարինելու

եկան արևմտաեվրոպական լեզուները, իսկ ադրբեջաներենի պարագայում՝ նաև թուրքերենը:

Ատենախոսությունն ավարտվում է հետևյալ հիմնական եզրահանգումներով.

1. Բառապաշարը, լինելով լեզվի՝ փոփոխությունների նկատմամբ ամենազգայուն հատվածը, իր վրա կրել է և կրում է հասարակական-սոցիալական կյանքի փոփոխությունների հետևանքները, որոնք առաջին հերթին իրենց արտացոլումն են գտնում մամուլում:

2. Ադրբեջաներենի բառապաշարի զարգացման ընթացքը նոր և նորագույն շրջանում դառնում է բառապաշարի հարստացման կարևոր խթան և հարթակ: Հատկապես ժամանակակից էլեկտրոնային լրատվամիջոցների բուռն զարգացումը և տարածումը ավելի է մեծացրել մամուլի լեզվի դերն ադրբեջաներենի կայացման գործում:

3. Ադրբեջանական մամուլում տեղ գտած մեծաքանակ նորաբանություններն աչքի են ընկնում բազմազանությամբ: Նորաբանությունների ստեղծման հիմնական ուղիներն են բառակազմությունը և փոխառությունները:

4. Տերմինների կիրառությունն ադրբեջանալեզու մամուլում նպաստում է մասնագիտական բառապաշարի հարստացմանն ու կանոնակարգմանը: Ադրբեջաներենում տերմինների ստեղծման արդյունավետ եղանակներից է ձևաբանականը, երբ նոր տերմիններ են ստեղծվում ադրբեջաներենի ամենաարդյունավետ վերջածանցների օգնությամբ:

5. Ատենախոսության երրորդ գլխում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

ա. Ադրբեջաներենի բառապաշարի առավել կարևոր հասարակական-քաղաքական շերտն ունի բառագիտական, պատմամշակութային նշանակություն, կայուն է և առավել զգայուն աշխարհաքաղաքական ազդակների նկատմամբ: Բ. ադրբեջանալեզու մամուլի ռազմական բառապաշարի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ ակտիվ բառապաշարը, այդ թվում նաև տերմինային, շարունակում է մնալ ռուսերենի ազդեցության ներքո:

6. Ադրբեջանական մամուլի լեզվի բառապաշարի ուսումնասիրությունն ըստ ծագման հնարավորություն է տալիս փաստելու, որ չնայած լեզուն թյուրքական ծագման բառերով հարստացնելու փորձերին՝ մինչ օրս արաբապարսկական ծագման բառերը շարունակում են պահպանել իրենց կայուն դիրքը բառապաշարի գրեթե բոլոր շերտերում:

7. Հասարակական-քաղաքական տեղաշարժերն անմիջական ազդեցություն են ունենում յուրաքանչյուր լեզվի բառապաշարի վրա: Խորհրդային, իսկ նվազ չափով ցարական շրջանից սկսած՝ հայ և ադրբեջանական մամուլի պատմությունը շատ դեպքերում խաչաձևվել է. խորհրդային շրջանում երկու լեզվի հրապարակախոսության ոճն ուներ որոշ ընդհանուր գծեր: Անկախացումից հետո ավելի ընդգծվեց հայ մամուլի բառապաշարի, ընդհանրապես հայոց լեզվի հզոր հիմքը, որը չի

կարելի ասել ադրբեջանական մամուլի բառապաշարի զարգացման մասին: Ադրբեջաներենի՝ պատմական բավական սահմանափակ հնարավորությունները մինչ օրս խնդիրներ են ստեղծում զարգացման կայուն ուղղություն և հիմքեր ուրվագծելու հարցում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Ադրբեջաներենի այբուբենի պատմության ուրվագծեր, 21-րդ դար «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2008, թիվ 4, էջ 157-166:

2. Լեզվաքաղաքականությունը ժամանակակից Ադրբեջանում, 21-րդ դար «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2009, թիվ 3, էջ 86-97:

3. Ընդհանուր թյուրքական լեզվի գաղափարը թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում, Հայկական բանակ, Երևան, 2011, թիվ 1-2 (67-68), էջ 217-226:

4. Ադրբեջանական մամուլի պատմությունից. համառոտ ակնարկ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2013, թիվ 8, էջ 259-266:

5. Ժամանակակից ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների՝ քաղաքական և ռազմական բնույթի հրապարակումների բառապաշարային պատկերը, Արևելագիտության հարցեր, Երևան, 2016, թիվ 12, էջ 217-224

6. Հայալեզու լրատվամիջոցներն Ադրբեջանում, Հայագիտության հարցեր, Երևան, 2016, թիվ 3(9), էջ 106-116

Лилит Размиковна Мовсисян

**Лексические особенности современной
азербайджаноязычной прессы по сравнению с армянским
языком**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук 10.02.02-«Лексические особенности современной азербайджаноязычной прессы по сравнению с армянским языком»

Защита состоится 26 марта 2018 года в 15.00 часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Г.Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию лексических особенностей языка азербайджаноязычных электронных СМИ. Лексика СМИ дает возможность проследить за всеми процессами развития, протекающими в языке. Научная новизна исследования заключается в том, что данное исследование является первым в армянских научных кругах. Временные рамки данной работы охватывают современный этап развития азербайджанского языка, началом которого принято считать провозглашение независимости Азербайджана в 1991 году.

Работа состоит из введения, четырех глав, заключения, примечаний, списка литературы и списка электронных СМИ.

Во введении представлен азербайджанский язык как тюркский язык, дана краткая история азербайджанской прессы, а также история изучения лексики азербайджанского языка, языка прессы, в том числе языка армянской прессы.

Первая глава, озаглавленная “Общие свойства лексики азербайджанского языка и этапы развития”, состоит из пяти параграфов. Здесь подробно изучена лексика азербайджанского языка, особенности обогащения лексики, основные этапы и отдельные пути развития. Отдельные параграфы посвящены неологизмам и терминам, применяемым в азербайджанской прессе.

Вторая глава, озаглавленная “Лексика языка азербайджанской прессы по происхождению”, состоит из двенадцати параграфов. Во второй главе речь идет о медиалингвистике, как о самостоятельном направлении современной лингвистики. Отдельно были исследованы лексика языка публикаций азербайджанской прессы политического, экономического, военного, культурного, научно-технического и иного характера.

Третья глава, “Особенности лексики языка прессы современного азербайджанского по смысловым группам”, состоит из девяти параграфов. В отдельных параграфах были рассмотрены общие черты исконных и заимствованных слов азербайджанского языка, а также особенности, присущие арабо-иранским, европейским, русским и турецким заимствованиям, особенности их применения.

В четвертой главе, озаглавленной “Сравнительный обзор лексики языка современной азербайджанской и армянской прессы”, сделана попытка представить общую картину языка современной армянской и азербайджанской прессы сравнительными методами. Учитывая тот факт, что Армения и Азербайджан были в составе СССР как союзные республики, по историческому стечению обстоятельств язык прессы двух народов имел некоторые общности.

В заключении представлены основные выводы, полученные в результате исследования.

Lilit Razmik Movsisyan

**Vocabulary features of modern Azerbaijani language with
comparison of Armenian language**

Thesis for the degree of Candidate of Philological Sciences in
10.02.02 – “General and Comparative Linguistics”.

The defence will be held on 26 March, 2018 at 15:00, at the
session of Specialised Council of Linguistics 019 of SCC RA in the
Language institute after H.Acharyan NAS RA (address: Yerevan, 0015,
Grigor Lusavorich Str. 15).

SUMMURY

The dissertation is dedicated to the study of vocabulary features of
media, particularly Azerbaijani-language electronic media. The language of
media, especially the vocabulary, gives an opportunity to follow all the
development processes that are taking place in the language vocabulary.
The current studie’s chronological boundaries involve the modern stage of
the Azerbaijani language development since 1991, the independence of
Azerbaijan.

The dissertation consists of introduction and four chapters,
conclusion, notes, literature list and electronic media list. The introduction
represents the Azerbaijani as a Turkic language, a brief history of the
Azerbaijani press and the general picture of the press language, as well as
the history of the study of the Azerbaijani vocabulary and the language of
the press, including the Armenian press language.

The title, "The general features of the Azerbaijani vocabulary and
its development stages" consists of 5 subchapters. Here the Azerbaijani

vocabulary is being particularly examined with the main ways and features of its enrichment, the main stages and individual layers of its development. Several subchapters are devoted to the neologisms and terminology used in the Azeri-language press. All subtitles are provided with quotes from the media.

The title of the second chapter which in its turn consists of 12 subchapters is "The peculiarities of the vocabulary of modern Azerbaijani press language according to significative groups". It is spoken about media linguistics as an independent branch of modern linguistics. The vocabulary of political, economic publications of the Azeri press, texts of military, cultural, scientific and technical content, rich in sport terms and the vocabulary of other content-oriented texts have been a separate study subject.

The third chapter, "The vocabulary of Azerbaijani Press Language by origin" consists of 9 subchapters. Common characteristics of native words and loanwords in Azerbaijani language, as well as specific features and application peculiarities of Arabic-Persian, European, Russian, Turkish loanwords have been examined by separate subchapters.

In the fourth chapter, entitled "A comparative overview attempt of the current Armenian and Azeri press language vocabulary" has been done to present the general picture of today's Armenian and Azerbaijani press language in a comparative, composite method. Taking into consideration the circumstance that Armenia and Azerbaijan were union republics in the USSR, hence, due to the historical process, the language of the two peoples had certain similarities.

The conclusion contains the main results obtained from the study.